



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



23332
9/8

P

398.5
9-96
1864

2010

12002

ԳԵՐՄԱՆԻԱ

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱԿՆԵՐ



Дозволено Цензурою. С.-Петербургъ, 23 Сентября 1864 г.

398.5

Գ-96 ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ

ԵՌԱԿՆԵՐ

ԵՂԱՍՐՑ ԳՐԻՄՄԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԵՍՄԱՐԿԱՆԱԳՈՒՄԸ.

—

Թարգմանութիւն Ֆրանսիականէն

Եւայի Տէր Գրեգորեանց:

ՏԵՏՐԱԿ Բ.

✓ 3742

Ս. ՊԵՏԵՐՐՈՒՐԿ.

1864

hup

42417-К2.

Ռաֆայէլ Պատկանեանի Ցափանումը.

По Офицерской улицѣ (напротивъ Демидова сада), домъ № 46.



26021-61

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ

ՆՌԱԿՆԵՐ.

—

1

ՌԱՄԻԿԸ ԵՐԿՆՔՈՒՄԸ.

Մի օր մեռաւ մի խեղճ բարեսիրտ ռամիկ
և եկաւ Գրախտի դուռը: Մի և նոյն ժա-
մանակ մեռել էր մի հարուստ մեծատուն,
որ նոյնպէս վերացել էր երկինք: Սուրբ
Պետրոսը եկաւ իւր բանալիներով, բացեց
դուռը ու մտցրաւ մեծատունին, բայց ան-
տարակոյս, նա չտեսաւ Ռամիկին, ըստ որում
նորան դուրս թողաւ ու փակեց դուռը:
Ռամիկը լսեց ուրախութեան ընդունելու-
թիւնը, որ երկինքը երգերով և երաժշտու-
թեամբ անում էր հարուստին: Երբ ձայ-

ները դադարեցան, սուրբ Պետրոսը վերադարձաւ և մտցրաւ վերջապէս Ռամկին: Սա սպասում էր, որ իւր մտցնելիս՝ երգեցողութիւնը ու երաժշտութիւնը նորից սկսի: Սակայն, ո՛չ մի ձայն չլսուեցաւ: Նորան ընդունեցին բաց սրտով, բայց մի ոչ հանդէս չեղաւ և ոչ ոք չի երգեց: Ռամիկը հարցրեց սուրբ Պետրոսին թէ ինչո՞ւ համար երաժշտութիւն չեղաւ նորա համար էլ, ինչպէս որ հարուստին, և թէ կողմնապահութիւնը թագաւորում է երկնքումն էլ: Ո՛չ, պատասխանեց Սուրբը. դու մեզ համար ուրիշներից պակաս չես, և այս մըտնողից էլ սակաւ չես վայելեր դրախտի երջանկութիւնը, բայց արի տես, որ քեզ նման խեղճ ռամիկներ մտնում են այս տեղամեն օր, սյն ինչ հարիւր տարին մի անգամ հազիւ թէ մի հարուստ մտնէ:

ՍՊԻՏԱԿ ՁԻՒՆ ԵՆ ԿՍՐՄԻՐ ՎՍՐԴ.

Մի աղքատ այրի կին ընակվում էր առանձին խրճիթի մէջ, որի դրան առաջ կար պարտէզ երկու վարդի ծառով, որից մինը բերում էր սպիտակ, միւսը կարմիր վարդ: Այս այրի կինը ունէր երկու աղջիկ, շատ նման այդ երկու վարդի ծառերին: Մինի անունը Սպիտակ Զին էր, միւսինը Կարմիր Վարդ: Այս երկու երեխայքը խիստ բարեպաշտ, հնազանդ և աշխատասէր էին. բայց Սպիտակ Զինը աւելի խաղաղ ու քաղցրը ընտելութեան տէր էր. իսկ Կարմիր Վարդը սիրում էր վաղվազել կանաչի և դաշտի վրայ, ծաղիկներ ու թիթեռներ փնտռել: Սպիտակ Զինը մնում էր տունը իւր մօր հետ, օգնում էր նրա տնական գործերին, և երբ գործերը վերջանում էին, կարդում էր նրա համար մի բան: Երկու քոյր այնքան սիրով էին մէկ մէկու հետ, որ միշտ ձեռք ձեռքի բռնած միասին դուրս էին գալիս. և երբ Սպիտակ Զինը ասում էր. «Մենք երբէք չենք բաժանվել», և Կարմիր

վարդը պատասխանում էր «Մինչև մեր մահը»։ Իսկ մայրը աւելացնում էր «Ամենայն ինչ ձեր մէջ պէտք է լինի հասարակաց»։

Նոքա յաճախ գնում էին միայնակ անտառ վայրերնի պտուղներ հաւաքելու համար։ Կենդանիք մեծարում ու աներկիւղաբար մօտանում էին նոցա. նապաստակը ուտում էր ձեռքերից, այծեամբ արածում էր ոտքերի տակ, եղջերուն խաղում էր նոցա առջև, և թռչունները, ծառերի ճիւղերի վրայ թառած, երգում էին իրանց գեղեցիկ երգերը։ Երբէք ոչ մի ձախորդութիւն չէր պատահում նոցա. եթէ գիշերը վրահասնէր անտառում, նոքա գրկախառնած պառկում էին մամուռի վրայ և քուն էին լինում մինչև միւս առաւօտ, առանց մի անհանգստութիւն պատճառելու իրանց մօրը։ Մի սնգամ, երբ նոքա գիշերը անցուցին անտառում, արշալոյսը բացուածին պէս զարթելով, տեսան իրանց առաջ մի գեղեցիկ, սպիտակ փայլուն շոր հագած երեխայ, որ ձգելով նոցա վրայ բարեկամական հայեացք, իսկոյն առանց մի խօսք ասելու աներևոյթ եղաւ անտառումը։ Այդ միջոցին նոքա նրկատեցին անդունդը, որի ափին ննջել էին և որի մէջ անպատճառ կ'գլորվէին, եթէ էլ

մի երկու քայլ անէին այդ խաւարումը :
Նոցա մայրը ասաց , որ այդ երեխան , ան-
շուշտ , բարեսիրտ աղջկանց սահապան հը-
րեշտակը պէտք է լինի : Սպիտակ Ձիւնը և
կարմիր վարդը այնպէս յստակ էին սա-
հում իրանց մօր խրճիթը , որ հայելու պէս
կարելի էր նրա մէջը նայել : Ամառը կարմիր
վարդը պարապում էր տան գործերով և
ամեն առաւօտ վերկենալու ժամանակ , մայրը
գտնում էր մի ծաղկեայ փունջ , որի մէջ
լինում էր երկու տեսակ վարդ , սպիտակ ու
կարմիր : Ձմեռը , Սպիտակ Ձիւնը վառում
էր կրակ , կախում էր կարթից արոյրէ
պոյտը , որ գեղեցիկ մաքրած ոսկու պէս
փայլում էր : Երեկոյին երբ ձիւն էր գալիս ,
մայրը ասումէր . « Սպիտակ Ձիւն , գնա՛ դուռը
փակիր . » յետոյ նստում էին կրակի առաջ .
մայրը դնում էր ակնոցները աչքին և կար-
դում էր մի մեծ գիրք . իսկ երկու փոքրիկ-
ները լսում էին նրան մանելով իրանց ա-
ղեկատը : Մի ուլիկ միշտ պառկում էր նոցա
ոտերի տակ , իսկ նոցա յետեւը մի տատրակ
գլուխը թևերի տակ առած ննջում էր ծառի
վրայ : Մի երեկոյ , երբ միասին ժողոված
էին , յանկարծ դուռը բաղխեցին : « Կարմիր
վարդ , ասաց մայրը , գնա՛ շուտով դուռը

բանց. անտարակոյս, մի մոլորւած ճանապարհորդ փնտռում է գիշերուայ ապաստանարան: Երբ կարմիր վարդը գնաց քաշեց սլարդունակը, յուսալով ներս ընդունել մի աղքատ մարդ, յանկարծ կիսաբաց դռնից մի արջ մտցրաւ իր մեծ սեւ կնճիթը: Կարմիր վարդը փախաւ կանչելով, ուլիկը սկսեց բառաչել, աղաւնին թռթռալ տան մի անկիւնից միւսը, Սպիտակ Զիւնը սրտադող պահվեցաւ իր մօր մահճակալի յետեւ. բայց արջը ասաց նոցա. «Մի՛ վախէ՛ք ինձանից, ես ձեզ վատութիւն չեմ անիւ. խնդրումեմ միայն հրաման փոքր՝ ինչ տաքանալու, ինչու որ կիսով չափ սառած եմ»:

— Սօտացիր կրակին, խեղճ արջ, պատասխանեց մայրը, միայն զգոյշ եղիր, որ մորթիդ չայրես: Յետոյ շարունակեց. «Սպիտակ Զիւն, կարմիր վարդ, վերադարձէ՛ք այս տեղ, արջը ձեզ փնաս չի տալ, նրա միտքը չար չէ:» Երկուքն էլ վերադարձան, վերջը ուլիկը ու տատրակը, կամաց կամաց մոռանալով իրանց վախը, նոյնպէս մօտացան:

Երջը ասաց. «Տղայք, թափեցէ՛ք փոքր ինչ կոնակիս ձիւնը:»

Նոքա առին աւել և յստակեցին բոլոր

մորթին, այդ գործողութիւնից յետոյ, ան-
ջը պառկեցաւ կրակի առաջ ուրախ ուրախ
սրտոտալով:

Երեսայքը շուտով հանգստացան ու
սկսան խաղալ այս անակնկալ հիւրի հետ:
Նոքա քաշումէին մորթուց, նստումէին կըռ-
նակի վրայ, թաւալումէին սենեակի մէջ
ու մտրակով կամացուկ զարնումէին. և երբ
նա սկսումէր սրտոտալ, նոքա բարձրաձայն
ծիծաղումէին: Արջը չէր յանդիմանում նո-
ցա, միայն երբ խաղը չափից դուրս էր գա-
լիս, նա ասումէր. «Թողէ՛ք ինձ ապրել, մի՛
սսլանէ՛ք ձեր հիւրը:» Երբ պառկելու ժա-
մանակը եկաւ, մայրը ասաց նրա. «Մնացիր
այս աեղ, անցրո՛ւ գիշերը կրակի առաջ.
գոնէ դու կ'սրտոսպարուիս այս տեղ ցրտից
և անբարեխառն եղանակից:»

Արշալոյս երեցածին պէս, փոքրիկ աղ-
ջիկները բացին դուռը և նա դնաց անտառ
մեծ մեծ քայլեր անելով: Այն օրից սկսած
նա վերադառնումէր ամէն երեկոյ մի և նոյն
ժամին, պառկումէր կրակի առաջ և տղայքը
խաղումէին նրա հետ, որքան որ կամենու-
մէին: Նրան այնպէս ընդելացել էին, որ
դուռը անգամ չէին փակում մինչև նրա
գալը:

Երբ աշունը եկաւ ու բոլոր շրջակայքը կանանչացան, մի առաւօտ արջը ասած Սպիտակ Զիւնին «Ես կ'երթամ ու մինէլ չեմ վերադառնալ ամառը:

— Ո՞ր ես գնում, սիրելի արջ, հարցրեց Սպիտակ Զիւնը:

«Ես գնումեմ անտառ չար Թզուկներից գանձերս սպհսպանելու. ձմեռը, երբ երկիրը սառած է, նոքա ստիպուած են մնալ իրանց ծակերում, չկարողանալով ճանապարհ բանալ, բայց այժմ երբ արեգակը տաքացրեց գետինը, նոքա դուրս են դալիս աւաղակութիւն անելու: Ինչ որ մի անգամ մտնումէ նոցա բնակարանը, մինէլ այն տեղից դուրս չի կարելի հանել: Սպիտակ Զիւնը շատ տխրեցաւ արջի գնալուն. երբ որ դուռը բացեց, արջը դռնափակին դաչելով քերթեց մորթին և աղջիկը նկատեց որ նրա կաշին ոսկու պէս փայլուն էր, բայց տակաւին չէր հաւաստի այդ մասին: Արջը շուտ շուտ գնաց ու անհետացաւ ծառերի քամակը:

Այի փոքրից յետոյ, մայրը ուղարկեց իր աղջիկները անտառ չոր ծառեր հաւաքելու համար. դոքա տեսան մեծ կտրած ծառ և մի ուրիշ բան, որ շարժւումէր այս կողմ այն կողմը կանաչի մէջ, սակայն չկարողացան

որոշել թէ ի՞նչ էր այդ բանը: Մօտանալով նկատեցին փոքրիկ ծերացած թղուկ կնճռած երեսով և մի կանգուն սալիտակ մօրուքով: Մօրուքը մնացել էր ծառի ճեղքի մէջ և թղուկը, իբր մի խաղացող շնիկ, վեր վեր էր թռչկոտում չկարողանալով ազատել: Ուղղելով իր կրակոտ հայեացքը փոքրիկների վրայ, կանչեց. «Ի՞նչ այդ տեղ փայտի պէս կանգնել էք, փոխանակ ինձ օգնութիւն տալու:

— Խեղճ, ի՞նչպէս պատահեցաւ որ ընկար այդ թակարդը: Պիման հարցասէրներ, ասաց թղուկը, ես ուղեցի ճեղքել այս ծառը խոհանոցիս համար ճղիներ^{*)} պատրաստելու, պտտճառ, մեր ամանները շատ քնքոյշ են ու մեծ փայտերի չեն դիմանալ, խկոյն կ'այրւին: Մենք ձեր որկրամուկ կռախտ ցեղի պէս չենք լափում ճաշը մեծ մեծ պատառներով: Ես մօտացրի սեպը ծառին, բայց այդ անիծեալ սեպը այնպէս լարծուտ էր, որ դուրս թռաւ այն րոպէին, երբ տակաւին չէի սպասում, և ճեղքը այնպէս շուտով փակուեցաւ որ ես չհասայ հանելու իմ փառաւոր սալիտակ մօրուքս ճեղքից. այժմ

*) Шенки.

ահա՛ մնացել է այս տեղ, չգիտեմ ի՞նչպէս
հանել: Հապա, ինչո՞ւ կանգնած ծիծաղումէք,
ի՞նչ կայ, ի՞նչ ականջներդ կախած նայումէք:

Երեխայքը որքան չաշխատեցին, չկարո-
ղացան աղատել մօրուքը, որը կարծես թէ
մամուլի տակ էր ճնշվել:

«Ես կ'աղղեմ մարդիկ բերելու», ասաց
կարմիր վարդը:

— Մարդիկ բերե՞լ, բացադանչեց Թղուկը
կերկերած ձայնով. դուք երկուքդ բաւական
չէք մի՞թէ, աւանակներ:

— Փոքր ինչ համբերութիւն ունեցէ՛ք,
մենք կ'աղատենք ձեզ, ասաց Սպիտակ Ձիւնը
և հանելով գրպանից իր փոքրիկ մկրատը,
կտրեց մօրուքի ծայրը: Թղուկը աղատուե-
լուց յետոյ, խփոյն գնաց առաւ լի ոսկով
սլարկը, որ սկսած էր ծառի արմատի մէջ
և մոմռալով ասաց. «Կոսկիտ արարածք,
այսպէս կտրել իմ փառաւոր մօրուքիս ծայ-
րը, թո՛ղ սատանան ձեզ հատուցումն ասայ»: «
Յետոյ նա դրաւ սլարկը իր կոնակի վրայ և
չնայած վրաները, հեռացաւ նրանցից: Մի
քանի ամիս անցած երկու քոյր գնացին մի
օր ճաշի համար ձուկ որսալու: Մօտանա-
լով գետին, տեսան մի տեսակ մեծ մարախ,
որ ոստոստումէր ջրի ափին, ասես թէ ջու-

րը նետուերը գիտաւորութեամբ: Նոքր վազեցին և ճանաչեցին Թղուկը: Պէ՛նչ ես ասնում, ասաց կարմիր վարդը, ուղղումես ջուրը ընկներ:՝

— Այնքան յիմար չեմ, բացառանչեց Թղուկը, չե՛ս տեսնում այս անիծած ձուկը քարշումէ ինձ:


Թղուկը նոյնպէս եկել էր ձուկ բռնելու ու ձգել էր կարթը. բայց դժբաղդաբար քամին խառնել էր նրա մօրուքը թելի հետ: Մի քանի րոպէից մեծ ձուկ կծել էր կերը և, լինելով աւելի ուժեղ, քարշում էր տրկար ստեղծուածը դէպի իր կողմը: Որքան չաշխատեց խեղճ Թղուկը բռնիւել գետափի մացառներից ու կանանչներից, չկարողացաւ աղատիւել ձուկից, և անպատճառ կ'զլորիէր ջուրը, եթէ դրսից օգնութիւն չստանար: Աղջիկները հասան ժամանակին և փորձեցին մօրուքը արձակել, բայց խղուր, ըստ որում սաստիկ խառնիւած էր թելի հետ. դարձեալ հարկաւոր եղաւ միրատին դառնալ ու նրանով կտրել մօրուքի մի մասը: Այն ինչ Թղուկը նկատեց այդ, բարկանալով գանչեց. Պէ՛նչ սուլորութիւն է եղել անմի տք, ասականել մարդու երեսը. բաւական չէ՛ր որ առաջի անգամ կարճացրաք մօրուքս, այժմ

էլ կտրեցիք կէսը. ի՞նչպէս երևիմ այսուհետեւ եղբայրակիցներուս աչքին : » Եւ առնելով պահած մարդարիտով պարկը, տարաւ հետը առանց մի խօսք ասելու, և անհետացաւ իսկոյն քարի քամակումը :

Սի քանի ժամանակ անցնելուց յետոյ, մայրը ուղարկեց իր աղջիկները քաղաք դերձան, ասեղ և ժապաւէն դնելու համար : Նոցա հարկաւոր էր անցնել ասպառաժուտ դաշտաւայրից, ուր մի մեծ թռչուն բաւական ժամանակ թռթռալով օդի մէջ, կամաց կամաց ցած իջաւ և յանկարծ յարձակուեցաւ հողի վրայ : Սյդ բոսպէին լսուեցաւ սուր և աղիողորմ ձայն : Նոքա վաղեցին ու մեծ երկիւղով տեսան մի արծիւ, որ բռնել էր ճանկերի մէջ նոցա հին բարեկամ թղուկը և կամենումէր երկինք բարձրացնել : Երեխայքը իրանց բարեհոգի բնաւորութեամբ, կարողացածներին չափ քարշեցին թղուկը և այնպէս լաւ պատերազմեցան արծուի հետ, որ նա ստիպուեցաւ թողնել իր աւարը ու փախչել . բայց երբ թղուկի վախը փոքր ինչ ցրուեցաւ, նա աղաղակեց իր խռպոտ ձայնով . » Չէ՞իք կարող աւելի քաղաքաւարի լինել դուք ինձ հետ, այնպէս քաշեցիք խեղճ շորիցս, որ այժմ պատառ

սլատառ եղաւ, յիմար աւանակներ:՝ Յետոյ,
առնելով իր թանկագին քարերով լցրած
սարկը, գնաց մտաւ իր ծակը ժայռերի
մէջ: Փոքրիկները սովորելով նրա ապերախ-
տութեան, ընկան ճանապարհ և գնացին
քաղաք իրանց գներէքները վերջացնելու
համար:

Նոյն տեղով վերադառնալու ժամանակ,
վրայ հասան Թզուկին, որ դատարկել էր իր
առաջ թանկագին քարերով սարկը, կար-
ծելով որ ոչ ոք կարող չէ անցնել այսպէս
ուշ այնտեղից: Մայր մտնող արևը փայլեց-
նումէր քարերէնները, որոնք այնպէս զար-
մանալի բոցեր էին արձակում, որ փոք-
րիկները անշարժ մնացին նայելով նրանց
վրայ: «Ինչու բերանաբաց կանգնել էք այդ-
տեղ,» ասաց նոցա Թզուկը, և նրա սովո-
րական թուխ երեսը միանգամայն կարմրե-
ցաւ բարկութիւնից: Նա յիշոցները շարու-
նակելու վրայ էր, մինէլ տեսնես լուե-
ցաւ մի սարսափելի մոմռոց և մի սև արջ
դուրս եկաւ անտառից: Թզուկը լեղասլա-
տառ ուղեց փախչել, բայց ժամանակ չու-
նեցաւ հասնելու իր ծակը. արջը կտրեց
նրա ճանապարհը: Այդ միջոցին Թզուկը
սկսաւ աղաղակել յուսահատ ձայնով. «Սի-



րելի տէր արջ, խնայի՛ր ինձ, ես քեզ կը-
տամ բոլոր իմ գանձը, այս զարդերը, որ
դու տեսնումես առջևդ, սլարդեւի՛ր միայն
ինձ կեանք. խնչ օգուտ քեզ ինձ պէս թը-
ղուկին մեռցնելուց, դու ինձ քո ատամնե-
րի տակ չես զգալ անգամ: Ա՛ռ, լա՛ւ է,
այս երկու անիծած փոքր աղջիկները, որ
երկու լաւ սխառառներ են լորամարդի պէս
սլարարտ. կո՛ւլ տուր նոցա ի սէր Աստու-
ծոյ:“ Բայց արջը չըլսելով նրան, այնպէս
սաստիկ հարուած տուաւ իր թաթով այս
չարասիրտ արարածին, որ նա նոյն րոպէին
փռւեցաւ անկենդան դետնի վրայ:

Փոքրիկները ահուդողի մէջ էին ընկել,
բայց արջը գանչեց, Պալիտակ Զիւն, կար-
միր Վարդ, մի՛ վախէք, սպասէ՛ք ինձ:“

Նոքա կանգնեցան ճանաչելով նրա ձայ-
նը. և երբ նա նոցա մօտեցաւ, վրայի ար-
ջնին յանկարծ ցած ընկաւ և տեսան նոքա
մի սիրուն երիտասարդ ոսկի շոր հագած:
Պէս արքայորդի եմ՝,“ ասաց նոցա, այս
անպիտան թղուկը ինձ, բոլոր գանձս գո-
ղանալով, արջի փոխեց և դատաւարտեց
այս կերպարանքով շրջմոլիկ կեանքի, այն-
պէս, որ կարող էի փրկվել միայն նրա
մահով, այժմ նա ստացաւ վարձատրու-

Թիւն իր չարագործութեան համար: Սպիտակ Զիւնը ամուսնացաւ արքայորդու, և կարմիր վարդը նրա եղբօր հետ: Նոքա բաժանեցին իրանց մէջ մեծ գանձը, որ Թըղուկը հաւաքել էր իր ծակումը: Պառաւ մայրը ապրեցաւ էլ շատ տարիներ հանգիստ ու երջանիկ իր զաւակաց մօտ. նա առաւ դրաւ սլատուհանի վրայ երկու վարդենիները, որոնք բերումէին ամեն ամառ գեղեցիկ վարդեր, սպիտակ և կարմիր:

3

ՊՐԵՄ ԲԱՆԱԳԻ ԵՐԱՅԻՆԱԳԸ.

Սի մարդ ունէր մի էլ, որ ծառայումէր նրան մեծ հաւատարմութեամբ շատ տարիներ. բայց ուժից այնքան ընկած էր, որ օր ըստ օրէ անընդունակ էր լինում աշխատութեան: Իշապանը մտադիր էր մորթել ու կաշին հանել: Կենդանին հասկանալով քամին որ կողմից էր փչում, առաւ գլուխը ու ընկաւ ճանապարհ դէպի Պրեմ: Պրեմը, ասումէր նա ինքնիրեն, ես կարող

եմ լինել քաղաքական երաժիշտ։⁶ Ճանապարհին սլատահեցաւ մի որսաշուն, որ կաղկանձումէր, ասեա թէ յոգնած լինէր շատ վաղելուց։ *»Ինչո՞ւ համար այդպէս կաղկանձումես, բարեկամ, հարցրեց էջը։*

— Ո՛հ, սլատասխանեց շունը, այնոր համար որ ես ծեր եմ, օրէ-օր թուլանում եմ և չեմ կարող որսի ելանել. սլարոնս դրա համար ուղումէր ինձ սատկեցնել. իմանալով նրա դիտաւորութիւնը, առի գլուխս ու փախայ դաշտ. բայց ի՞նչպէս մի կտոր հաց ձարեմ ու գլուխս պահեմ։⁶

— Լա՛ւ, ասաց էջը, ես դնումեմ Պրեմ քաղաքական երաժիշտ լինելու, եկ իմ հետ երաժիշտ եղի՛ր, ես կ'փչեմ զուռնան, իսկ դու կ'ըլարնես ծնծղան։⁶

Շունը ընդունեց հրաւերը ու դնաց նրա հետ միասին. փոքր ինչ հեռու, նոքա տեսան մի տխուր երեսով կատու, որ քուն էր լինում. *»Ինչո՞ւ այդպէս տխուր պահած ես, ուրաւի ընչացք,»* ասաց էջը։

»Ուրախ չես լինիր, եթէ գլխիդ ողջութեան մասին երկիւղ ես կրում,» պատասխանեց կատուն, որովհետեւ տարիներս անցած ու ատամներս բթացած լինելուն պատճառաւ, ես աւելի լաւ էի համարում

սղեկատը դիմացս մնալ կրակարանի յետեւը, քան թէ մոռլ բռնել, տիրուհիս կամեցաւ ինձ ջուրը ձգել, ես դէպ ժամով աղատուլեցայ, բայց այժմ ի՞նչ անեմ և ուր երթամ:՝

— Եւ մեղ հետ Պրեմ, դու լաւ գիտես գիշերային երաժշտութիւն, այն տեղ կ'լինես մեղ նման քաղաքական երաժիշտ:—

Աստուին սրտովը լինելով այս առաջարկութիւնը, գնաց նոցա հետ: Մեր թափառականքը շուտով եկան մի գաւթի առաջ, որի դարպասի վրայ մի աքաղաղ նստած կոկորդն էր ճեղքում: Պոլ մեր ականջներն ես խլացնում,՝ «ասաց էջը. ինչո՞ւ համար այդպէս աղաղակումես:»

— Արշալուսի բացուելը իմաց եմ տալիս, ասաց աքաղաղը, սլատճառ որ, այսօր Աստուածամայրը լուացել է և այսօր պիտի չորացնէ Յիսուս մանուկի շապիկները. իսկ էգուց որովհետեւ կիւրակի է, տիկինս չափազանց անգութ է դէպի իմ անձը. նա ասաց խոհարարին որ այս գիշեր մօրթէ ինձ և արդանակ եփէ, որպէս զի էգուցուայ ճաշկերութիւն հիւրերի հետ միասին լափէ ինձ. ահա ինչու համար վերջին ան-

գամ աղաղակումեմ որքան որ զօրութիւնըս հասնումէ։

— Հատ բարի, կարմրակատար, ասաց էջը, եկ շուտով մեզ հետ Պրեմ, քեզ համար որ տեղ էլ որ երթաս, մահից լաւ կըլինի. քո գեղեցիկ ձայնովը մեր երաժշտութիւնը շատ ներդաշնակաւոր կ'լինի։

Այս հրաւերը հաճոյ եկաւ աքաղաղին, ուստի չորսն էլ միասին ճանապարհ ընկան։ Զկարենալով այն օրը Պրեմ հասնել, մտան մի անտառ մտածելով գիշերը այն տեղ անցնել։ Էջը ու շունը տեղաւորվեցան մի մեծ ծառի տակ, կատուն ելաւ վրան, իսկ աքաղաղը, համարելով ծառի ծայրը աւելի ասպահով իրա համար, թռաւ ու նստաւ վրան. քնելուց առաջ, որովհետեւ աչքը ձգել էր իր չորս կողմը, տեսաւ մի փոքրիկ լոյս և դառնալով դէպի իր ընկերները, գանչեց. «Եղբայրք, այս տեղից մօտ պէտք է լինի մի տուն, ըստ որում պատուհանից երևումէ լոյս։» — «Եթէ ուղիղ է, ասաց էջը, վերկենանք ու շուտով գնանք այն տեղ. այս անիծած պանդոկը շատ անյարմար է պառկելու։» Շունը յաւելցրեց. «Արդարեւ չէի հրաժարուիլ եթէ լինէր մի քանի կտոր մսոտ ոսկոր։ Ուղևորվելով

դէպի այն կողմը, որ տեղից երևումէր լոյսը, նոքա նկատեցին որ այդ լոյսը անդադար մեծանում ու սաստկանումէր, և շուտով վերջապէս հասան մի աւաղակի լուսաւորված տան առաջը:

Իշը, իբրև ամենից մեծը, մօտեցաւ սլատուհանին և նայեցաւ սենեակի մէջ. Պի՛նչ կայ այդ տեղ, ա՛լևոր, հարցրեց նրան աքաղաղը:՝

— Ի՞նչ կայ, սլատասխանեց էշը, մի սեղան վրան ուտելիք խմելիք դարսած և աւաղակներով շրջապատած, որոնք ուրախ ուրախ ուտում և խմում են:՝

— Ս՛եր բերանից հեռու, ասաց աքաղաղը:

— Ի հարկէ, կրկնեց էշը, վատ չէր լինէր, եթէ լինէինք այն տեղ:՝

Նոքա սկսան մտածել թէ ի՞նչպէս դուրս հանեն գողերը: Վերջապէս վճռեցին. նախ և առաջ կանգնեցաւ էշը, առջևի ոտերը սլատուհանի վրայ դնելով, շունը ելաւ էշի կոնակի վրայ, կատուն նստաւ շան վրայ, աքաղաղը թռաւ ու նստաւ կատուի գլխի վրայ: Աւարտելով այս գործողութիւնը, նոքա նշանացի առնելով սկսեցին միասին իրանց երաժշտութիւնը. էշը սկսաւ զռալ, շունը հաչել, կատուն մլաւել, աքաղաղը

երգել . յետոյ յանկարծ ասականները ու շըր-
ջանականները ջարդ ու փշուր անելով ներս
սենեակ թափուեցան :

Գողերը լսելով այդ աղաղակը և հաս-
տատ իմանալով որ անցաւոր մարդ երբէք
սլատուհանից դահլիճ չի մտնիր, զարհու-
րած վերկացան ու բոլորեքեան փախան
անտառ : Այս յաղթութիւնից յետոյ, չորս
ընկեր նստան սեղանի առաջ, սեփականե-
ցին ինչ որ մնացել էր և այնպէս կերան որ
կարծես թէ մի ամիս ծով էին սահել :
Երբ ընթրիքը վերջացաւ, նոքա անցուցին
ճրագները և որոնեցին հանգստութեան
համար մի մի ասահով տեղ, իւրաքան-
չիւրը իր բնաւորութեան համեմատ : Էջը
սլառկեցաւ աղբի վրայ, շունը դրան յե-
տեւը, կատուն կրակարանի մէջ տաք ա-
ծուխի մօտ, աքաղաղը գերանի վրայ, և
որովհետեւ երկար ճանապարհից յողնած
էին, իսկոյն քուն մտան : Կէս գիշերից
յետոյ, գողերը նկատեցին հեռուից, որ
տան մէջ լոյսը մարել էր և ամենայն ինչ
խաղաղ էր. նոցա առաջնորդը տասց. »Մեզ
հարկաւոր էր այդ օրինակ յաղթուել .“ և
հրամայեց ծառաներից մինին գնալ իմա-
նալ թէ ինչ է սլատահել տան մէջ : Պատ-

դամաւորը ամենայն ինչ խաղաղութեան մէջ
գտաւ : Մտնելով խոհանոց և կամենալով
ճրագ վառել, առաւ մի շուշիկ և, որով-
հետեւ կատուի փայլուն ու կրակոտ աչքերը
երկու վառած ածուխի կ'նմանէին, մօ-
տացրաւ նրա աչքերին վառելու համար.
բայց կատուն, որ չէր սիրում այդ տեսակ
կատակներ, թռաւ նրա երեսի վրայ ու ճան-
կուտեց մոմռալով : Մարդը սարսափած վա-
ղեց դէպի դուռը փախչելու, բայց դրան
առաջ սլառկած շունը յարձակւեցաւ վրան
ու խաճաւ ոտքից, և որովհետեւ անցնումէր
գաւթի աղբի մօտով, էշը իր քամակի ո-
տերով տուաւ սաստիկ քայի, մինչդեռ ա-
քաղաղը, զարթելով այս շփոթներից և ար-
դէն տակաւին կայտառ, գանչեց գերանի
վրայից ՝ կոռնիկ : « Պատգամաւորը բո-
լոր ոյժը ոտերին տալով, եկաւ դողերի
մօտ և ասաց. ՝ Մեր տան մէջ կայ մի սար-
սափելի կախարդ, որ փչեց վրաս և ճան-
կեց երեսս իր երկայն մատերով. դրան ա-
ռաջ կանգնած է մի պահապան սուրը ձեռ-
քին, որով կտրեց ոտս. գաւթում ման է
գալիս մի վիշապ, որ մի ահագին լախտով
խփեց մէջքիս, իսկ կատուի վրայ նստած է
դատաւոր, որ գանչեց. « Բերէ՛ք իմ մօտ

այդ գողը , և ահա՛ այսպէս յետևս չնայած
փախայ :“

Եյն օրից սկսած , գողերը եւ չէին հա-
մարձակվում այն տունը մտնել , ուր Պրեմի
չորս երաժիշտքը այնպէս երջանիկ կեանք
էին վայելում , որ այնուհետև երբեք չէին
ուզում թողնել :

4

ՍՐՋԻ ՄՈՐԹԻ ՀՍԳՍԾ ՄՍՐԴ.

ՍԴի երիտասարդ մտել էր զօրք , որի մէջ
շատ քաջ էր բռնում իրան , գնդակների
դէմ միշտ առաջինը ելանելով : Պատերազմի
ժամանակ նա միշտ բաղդաւոր էր , բայց երբ
հաշտութիւն արին , զօրապետը տուաւ նը-
րան արձակուրդը և հրամայեց գնալ ուր
որ կամենումէ : Որովհետև նրա ծնողքը
մեռած էին , բնակարան եւ չունէր , ուստի
խնդրեց իր եղբայրներից տեղ տալ իրան
մինչև պատերազմի սկիզբը : Բայց նոքա
կոշտ սիրտ ունենալով , պատասխանեցին որ
ոչինչ չեն կարող անել նրա համար , այն

սլատճառաւ որ նա ոչ մի բանի ընդունակ
չէ և եթէ սլարտաւոր է մի կերպով իր գը-
լուսը ինքը սլահել: Խեղճ զինուորը բացի
ատրճանակից ուրիշ բան չունէր, զնեւով
նրան ուսերի վրայ, գնաց ուր որ աչքերը
նայումէին: Մտնելով մի դաշտ, ուր բացի
շրջասլատ ծառերից ուրիշ բան չէր երե-
ւում, նստաւ մի ծառի ստուերի տակ, տըխ-
րութեամբ մտածելով իր վիճակի վրայ: «Ես
փող չունիմ, երբէք չեմ սովորել ուրիշ
արուեստ բացի սլատերազմից, և այժմ հաշ-
տութեան ժամանակ ես մի բանի սէտք չեմ
գալիս. ի՞նչ անես, վերջս սովատանջ մեռ-
նել սխտի լինի:»

Մինչ նա այդ մտածմունքի մէջ էր, լսեց
մի ձայն, և բարձրացնելով աչքերը, տեսաւ
իր մօտ մի անծանօթ մարդ կանանչ, բա-
ւականին հարուստ շոր հագած, բայց ա-
հադին սմբակներով: «Ես լաւ գիտեմ քեզ
ինչ հարկաւոր է, ասաց անծանօթը, գի-
տեմ որ փողի կարօտութիւն ունիս. ես
կ'տամ քեզ որքան որ ուղղումես, միայն եթէ
խմանամ որ վախկոտ չես, ըստ որում ես
այնպէսների հետ գործ չեմ ունենում:»

— Օ, ինուոր և վախկոտ, սլատասխանեց
միւսը, երկու այնպիսի բառեր են, որոնք

երբէք միասին չեն գործածվում: Դու կարող ես ինձ փորձել:

» Դէ, լաւ, ապա անձանօթը, նայիր քո յետև: «

Օ ինուորակներ յետևը նայած չնայած տեսաւ մի սարսափելի արջ, որ սրտուռով վազումէր նրա վրայ: » Ո՛հ, ո՛հ, բացադանչեց նա, ես այս բոսէիս քթիդ ծակերը կ'ստտղեմ որ ձայնդ կտրես. « և ուղղելով հրացանը նրա վրայ, զարկեց ցոռկին, և արջը նոյն բոսէին սնկենդան փռուեցաւ գետնի վրայ:

» Ա՛յ և տեսնումեմ, ապա անձանօթը, որ դու քաջասիրտ մարդ ես, բայց սլարտական ես կատարել էլ ուրիշ սպամաններ: «

— Ո՛չ մի բան չէ կարող ինձ բռնել, ապա զինուորականը, որ շատ լաւ տեսնում էր դիմացի խօսողը ո՞վ էր, եթէ միայն մըշտական ազատութիւնս վտանդի մէջ չընկնի:

» Ինքդ այդ կ'դատես, ապա անձանօթը. դու եօթը տարի սլարտական ես ո՛չ լուացուել, ո՛չ մօրութիւն և ո՛չ մաղերդ սանդրել, ո՛չ կղունդներդ կտրել և ո՛չ աղօթք անել: Ես քեզ կ'տամ շոր և մի վերարկու որ հագնես բոլոր այդ ժամանակը: Եթէ դու մեռնես այդ միջոցին, իմը կ'լինես, բայց

եթէ դու եօթը տարուց աւելի ասլըս, բո-
լոր կեանքդ կ'լինես աղատ և հարուստ։”

Օ, ինուորը մտածեց իր թշուառ դրու-
թեան վրայ. նա, որ քանի անգամ արհա-
մարհել էր մահը, լաւ կարող էր այս ան-
գամ էլ գլուխը վտանդի մէջ դնել, հա-
մաձայնեցաւ։ Սատանան հանեց իր կանանչ
զգեստը և տուաւ նրան ասելով. «Քանի
որ այս զգեստը վրադ կ'լինի, ամեն անգամ
ձեռքդ գրպան տարածիդ, մի բուռն ոսկի
կ'հանես։» Յետոյ հանելով արջի մորթին,
յաւելցրեց. «Քեզ հարկաւոր չէ՜ ունենալ
ուրիշը. այս զգեստի համար քեզ կ'անուա-
նեն Արջի Մորթի։» Այս ասելով, սատա-
նան աներևոյթ եղաւ։

Օ, ինուորը հագաւ շորը և տանելով
ձեռքը գրպանին, համոզուեցաւ որ սատա-
նան չէր խաբել։ Չգեց վրան նոյնպէս արջի
մորթին և ընկաւ ճանապարհ աշխարհ
չափելու, վայելելով եղանակի բարեքները
և չխնայելով մի բան, որ կարող էր գերա-
ցնել մարդու մարմինը և թիթեւացնել
նրա քսակը։ Առաջի տարին, դեռ ևս նա
մարդու նման էր, բայց երկրորդը նա դար-
ձաւ կատարեալ հրէշ։ Նրա մաշերը գրե-
թէ ծածկումէին բոլոր երեսը, խառն ու

քրքրած մօրուքը թաղիքի կնաման էր և երեսը այնպէս կեղտոտած էր, որ եթէ ցան ցանէին, անսլառճառ կ'ըսնէր : Ամենքը նրանից վախումէին, բայց որովհետեւ նա տալիս էր աղքատաց առատ ողորմութիւն, խնդրելով միայն նոցանից աղօթք անել որ եօթը տարուայ մէջ չմեռնի, և որովհետեւ համարվումէր խոնարհ ու բարեսիրտ, ուստի միշտ գտնումէր մի սալաստան :

Չորրորդ տարին նա եկաւ պանդոկ, ուր պանդոկապետը չկամեցաւ նրա ընդունել և ախոռում անգամ տեղ տալ, կասկածելով որ մի՛ գուցէ վախցնէ ձիերը : Բայց Արջի Մորթին հանելով գրպանից բուռն ոսկի, պանդոկապետը համաձայնեցաւ և տուաւ նրան սենեակ գաւթի անկիւնում այն սպամանով որ երեսը մարդու ցոյց չտայ, որպէս զի պանդոկի պատիւը չկորչի :

Մի երեկոյ Արջի Մորթին նստած իր սենեակիումը մտածումէր թէ շուտով արդեօք եօթը տարին կ'վերջանայ, մինչև տեսնես լսեց կից սենեակից մի մարդու լաց. որովհետեւ շատ բարեսիրտ էր, բացեց դուռը և տեսաւ մի ծերունի, որ գլուխը ձեռքի մէջ բռնած հառաչումէր, բայց Արջի Մորթին մտնելիս, մարդը կամեցաւ փախչել. վեր-

Ջապէս նա հանգստացաւ, երբ լսեց մարդու
ձայն, որ նրա հետ խօսումէր: Արջի Մորթին
բարեկամական խօսքերով կարողացաւ պատ-
մել տալ նրան իր տխրութեան պատճառը:
Նա կորուսել էր բոլոր իր հարստութիւնը և
աղջիկների հետ այնպէս աղքատացած էր,
որ միանգամայն կարողութիւն չունէր վճա-
րելու իր պարտքերը պանդոկապետին, ինչու
համար և ուղումէին նրա բանտ նստացնել:
«Եթէ դուք մի ուրիշ հոգացողութիւն չու-
նէք, ասաց նրա Արջի Մորթին, իմ փողը
բաւական կ'լինի ձեզ նեղ տեղից հանելու»,
և կանչելով պանդոկապետը իր մօտ, վճա-
րեց պարտքը և տուաւ ևս սյդ դժբաղդ-
ներին մի մեծ գումար փող նոցա պիտոյքի
համար: Ծերունին, այս օրինակ աղատուած,
չէր իմանում ինչպէս յայտնել իր շնորհա-
կալութիւնը: «Ե՛կ իմ հետ, ասաց նա, իմ
աղջիկներս շատ սիրուն են, դու նոցանից
մինը կարող ես քեզ համար կին առնել:
Նոքա չեն մերժել քեզ, եթէ իմանան ինչ որ
դու ինձ համար արիր: Թէ և քո դէմքը
փոքր ինչ տարօրինակ է, բայց լաւ կ'ինը
կարող է քեզ կարգի բերել:»

Արջի Մորթին համաձայնեցաւ ուղեկից
լինել ծերունուն, բայց երբ մեծ աղջիկը

նկատեց նրա սոսկալի երեսը, այնպէս վախեցաւ, որ ճիշ բարձրացնելով փախաւ. երկրորդը ոտի վրայ հաստատ կանգնած, զննեց ոտքից մինչև գլուխը և ասաց «Ի՞նչպէս սրա ամուսին լինել, տակաւին մարդկային կերպարանք չունի, ես գերազանց կ'համարեմ տօնաւաճառի այն սափրած արջը մարդու պէս զգեստաւորուած, սասկե տական մուշտակով և սպիտակ ձեռնոցներով: Գոնէ նա միայն տգեղ էր, կարելի էր նրան ընդելանալ:

Բայց բոլորից կրտսերը ասաց. «Սիրելի հայր, կարծեմ դա մի բարեսիրտ մարդ պէտք է լինի, որովհետև նա մեզ օգնեց, դուք նրա խոստացել էք մի կին, հարկաւոր է խօսքից յետ չկենալ:» Տարաբաղդաբար Արջի Մորթու երեսը ծածկուած էր մազերով և կեղտով, եթէ ոչ կարելի էր տեսնել նրա ուրախութիւնը որ փայլեցաւ երեսին վրայ այդ խօսքերը լսելիս: Նա հանեց իր մատից մի մատանի և, կէսուակէս կոտրելով, տուաւ մի կէսը իր հարսին և պատուիրեց լաւ պահել, իսկ միւս կէսը իրան առաւ: Այն կէսի վրայ որ տուել էր աղջկան, գրեց իր անունը, և միւսի, որ առել էր իրան համար, գրեց հարսնացուի

անունը : Յետոյ հրաժարական ողջոյն տա-
լով նրան , ասաց . « Ես քեզանից բաժանը-
վումեմ երեք տարուայ , եթէ վերադառնամ
այդ միջոցին , կ'սպակոխեմ , իսկ եթէ ոչ ,
կ'նշանակէ որ մեռած եմ և դու կ'լինես ա-
զատ : Խնդրիր Աստուծուց , որ նա պաշտ-
պանէ իմ կեանքը : »

Խեղճիկ հարսնացուն հագաւ սև շոր , և
արտասունքը թափվումէին նրա աչքերից ,
երբ նա մտածումէր իր ամուսնու վրայ :
Քոյրերը անխղճաբար ծիծաղումէին վրան :
« Զգո՛յշ եղիր , ասումէր մեծը , որ երբ ձեռքդ
տաս նրան , իր թաթերովը կաշին չի հանէ : »

— Վստա՛հ եղիր , յաւելացնումէր երկ-
րորդը . արջերը սիրումեն քաղցրութիւն ,
երբ նրա դուր գաս , անպատճառ հում
հում կուլ կ'տայ քեզ : Գու պէտք է միշտ
գլուխդ ծռես , ապա թէ ոչ զգո՛յշ եղիր
նրա մոմռոցից :

« Բայց , շարունակումէր երկրորդը , հար-
սանիքի օրը ուրախ կ'լինի , արջերը աննման
սլար են գալիս : »

Խեղճիկ հարսնացուն ամենեւին չէր բար-
կանում այս վիրաւորական խօսքերի վրայ :
Իսկ Արջի Մորթին թափառումէր ու թա-
փառում բարեգործութիւն անելով , որքան

որ կարողանումէր, առատօրէն փող բաժանելով աղքատաց, որ նոքա աղօթք անեն նրա համար:

Վերջապէս երբ եօթը տարուայ վերջին օրը եկաւ, նա վերադարձաւ դաշտ ու նըստաւ շրջապատ ծառերի մէջ: Մի մեծ քամի բարձրացաւ, շուտով սատանան խոժոռ դէմքով երևան եկաւ և ձգելով զինուորի առաջ հին շորը, սլահանջեց իր կանանչ զգեստը: «Կայ, ասաց Արջի Մորթին, առաջ սլարտաւոր ես ինձ մաքրել:» Սատանան ստիպուեցաւ ակամայ գնալ ջուր բերել, լուանալ Արջի Մորթին, սանդրել նրա մազերը և կտրել նրա եղունգները: Մարդը կրկին ստացաւ քաջ զինուորի կերպարանք և եղաւ աւելի սիրուն, քան թէ առաջ էր:

Արջի Մորթին թեթևութիւն զգաց, ազատվելով այդ մեծ բեռնից, երբ Սատանան այլ նեղութիւն չտուած հեռացաւ: Նա վերադարձաւ քաղաք, հագաւ մի գեղեցիկ թաւիշեայ զգեստ և նստելով չորս ձի լըծած կառք, հրամայեց քշել հարսնացուի տունը: Ոչ ոք չճանաչեց նրան: Հայրը համարելով երևելի զօրապետ, տարաւ նրա իր աղջկանց մօտ: Երկու մեծ քոյրերը

նստացրին նրա իրանց մէջ տեղը և պաշ-
տելով հոյակապ կերակուր, յայտնեցին միա-
բերան, որ երբէք չէին տեսած նրա նման
սիրուն ասպետ: Իսկ նրա սեւազգեստ հարս-
նացուն լուռ ու վիզը ճուկ նստած էր դէմ
ուղէմ: Վերջապէս հայրը հարցրեց թէ
կամենումէ արդեօք ամուսնանալ իր աղջ-
կանց մինի հետ: Երկու մեծերը վաղեցին
իրանց սենեակը զարդարուելու համար,
սլատճառ որ ամեն մէկը նոցանից համա-
րումէր իրան գերադաս գեղեցկութեամբ:

Ենծանօթը մնալով մենակ իր հարսնա-
ցուի հետ, առաւ դրսւանից մատանու կէսը,
ձգեց գինով բաժակի մէջ և առաջարկեց
նրան: Երբ նա խմեց և տեսաւ բաժակի
մէջ այդ կտորը, որ կախած էր իր վզից,
մօտացրաւ առաջինին և երկուսն էլ կպան
մէկ մէկու: Այս բանից յետոյ նա ասաց
աղջկան «Ես քո ցանկալի ամուսինն եմ,
որ դու տեսել էիր արջի մորթով. հիմի,
Աստուծոյ ողորմութեամբ, ես ստացայ իմ
մարդկային կերպարանքը և մաքրուեցայ
կեղտերից:» Եւ գրկախառնելով նրան սկսաւ
համբուրել երեսից: Նոյն իսկ լոսպէին եր-
կու քոյրը զարդարված մտան սենեակ, բայց
երբ նոքա տեսան, որ այդ սիրուն մարդը,

որ երբեմն արջի մորթի էր հագած, սլառ-
կանումէ փոքր քրոջ, փախան մեծ տհաճու-
թեամբ և կստաղդութեամբ: Առաջինը գնաց
մի ջրհորի մէջ խեղդուեցաւ, իսկ երկրորդը
կախուեցաւ ծառից:

Երեկոյեան դուռը բաղխեցին, փեսան
բանալով դուռը, տեսաւ կանանչաղդեստ
սատանան որ ասաց. »Թէ և ես կորուսի քո
հոգին, բայց նրա տեղ ստացայ ուրիշ եր-
կուսը:«

5

ՀԱՒԱՏԱՐԻՄ ՅՈՒՀԱՆՆԷՍԸ.

Ճամանակով կար մի ծեր թաղաւոր:
Սա մի օր հիւանդացաւ և զգալով որ շատ
չէր մնացել այս աշխարհից միւսը անցնե-
լու, կանչեց իր հաւատարիմ Յովհաննէս
ծառան: Այս Յովհաննէսը թաղաւորի սի-
րելի ծառան էր, և կոչուած էր հաւատա-
րիմ այնոր համար, որ բոլոր իր կեանքը
հաւատով ու արդարութեամբ ծառայել էր
իր տիրոջ: Երբ Յովհաննէսը եկաւ, թա-

գաւորը սասաց. «Իմ հաւատարիմ Յովհաննէս, զգուժեմ որ մահս մօտանումէ, բայց իմ միակ հոգացողութիւնս այժմ որդիս է, որ դեռ ևս շատ դեռահաս ու անխորձ երիտասարդ է: Խոստացիր ինձ հոգալ նրա վրայ, սովորեցնել ինչ որ հարկաւոր է և լինել նրան երկրորդ հայր, այն ժամանակ ես հանգիստ կըմեռնեմ:»

— Եւ չեմ թողնել նրան, սկստասխանեց Յովհաննէսը, կ'ծառայեմ հաւատով ու արդարութեամբ, կեանքս էլ չեմ խնայել:

«Եւ այժմ ես կ'մեռնեմ հանգիստ, ասաց ծերունին: Իմ մահից յետոյ, կըցոյց տաս նրան բոլոր սլաւաւոր, սենեակները, վերնատունը, մառանները իրանց բոլոր գանձերով, միայն վերջին սենեակը, որ մեծ սլաւոյգամբի ծայրումն է, ցոյց մի՛ տուր: Այն տեղ սլահվումէ Ուէլֆֆէլէ դշտոյի սլատիկերը: Երբ նա կ'նայի այդ սլատիկերի վրայ, այնպէս կ'սիրահարվի, որ իսկոյն անդգայ կ'ընկնի այն տեղ, իսկ վերջերում իր անձը անբաղդութեան մէջ կըձգէ նրա սլատճառով: Աշխատիր զգուշացնել այդ ճախորդութիւնից:»

Հաւատարիմ Յովհաննէսը էլ մի անգամ կրկնեց իր խոստմունքը և այնուհետև

Թագաւորը հանգստացած խոնարհեց դռ-
խը բարձի վրայ ու փչեց հոգին:

Երբ Թաղեցին ծերունի Թագաւորը,
Յովհաննէսը ասաց նրա յաջորդին. «Ես
խոստացայ հօրդ ծառայել քեզ հաւատով
և արդարութեամբ, կեանքս էլ չխնայել:
Ես կ'սրահեմ խօսքս և կ'լինեմ քեզ էլ հա-
ւատարիմ, ինչպէս էի հանդուցեալ հօրդ:»

Ողբաց արքայորդին, տրտմեցաւ հան-
գուցեալի վրայ և վերջասպէս սփոխեցաւ:

«Այժմ ժամանակ է քեզ տեսնելու քո ժա-
ռանգութիւնը, ասաց Յովհաննէսը. ես քեզ
ցոյց կըտամ հօրդ ամբողջ սրաւատը:» Նա
մանաձաւ սրաւատի բոլոր սենեակները,
ցոյց տուաւ բոլոր գանձերը, բոլոր շքե-
ղազարդ դահլիճները, միայն մի դուռն, որ
տանումէր վերջին սենեակը, չկամեցաւ բա-
նալ: Այդ սենեակի մէջ սրահվումէր դըշ-
խոյի վտանգաւոր պատկերը: Այդ պատ-
կերը այնպէս դրուած էր, որ դուռը բա-
ցուածին պէս, ուղղակի աչքի առաջ էր
դալիս, և այնպէս կենդանի նկարուած էր,
որ միայն լեզու չունէր որ խօսէր: Արքայ-
որդին նկատելով որ Յովհաննէսը մի դուռը
փակ թողեց, հարցրեց թէ ինչո՞ւ համար
նա չէր բաց անում այդ դուռը: — «Այդ

սենեակի մէջ կայ մի բան, պատասխանեց Յովհաննէսը, որից դու կարող ես վախենալ:՝

— Ես չըջեցի բոլոր պալատը, ասաց արքայորդին, անշուշտ և փափագում եմ տեսնել ինչ կայ դրա մէջն էլ. և կամենումէր զօրութեամբ բանալ դուռը: Բայց հաւատարիմ ծառան բռնելով ասաց. «Ես խոստացայ քո հօր չըբերել քեզ այս սենեակը և ցոյց չտալ մէջի պահուած բանը, ըստ որում հետևանքը կարող է երկուսիս համար էլ վտանգաւոր լինել:

» Սեփ վտանգ և ձախորդութիւն կը լինի, պատասխանեց արքայորդին, եթէ կամքս չկատարուի: Գիշեր ցերեկ ես կը տանջվիմ մինչև չտեսնեմ ինչ որ դու ինձանից ծածկումես: Ես ամենևին չեմ հեռանալ այս տեղից մինչև որ դուռը չբանաս...:՝

Հաւատարիմ Յովհաննէսը տեսաւ որ ուրիշ հնար չկայ, և խոր հառաչելով հանեց նա աղետալի բանալին, բացեց դուռը ու ինքը առաջից գնաց, աշխատելով ինչպէս և իցէ ծածկել դշտյի պատկերը, բայց իղձը, արքայորդին բարձրացաւ ոտի մատերի վրայ և տեսաւ Յովհաննէսի քամա-

կից դշխոյի պատկերը : Բայց տեսած չտեսած այդ սիրուն, ոսկեղարդ աղջկայ պատկերը , յուշաթափ ընկաւ յատակի վրայ : Հաւատարիմ ծառան բարձրացրեց և տարաւ պառկեցրաւ անկողնի վրայ : »Ահա՛ քեզ , փորձանքը արդէն պատահեցաւ , Տէր Աստուած , ի՞նչ անեմ՝ , և կազդուրելու համար տուաւ նրա փոքր ինչ գինի խմել :

Թագաւորի յուշաբերութիւնս առաջի խօսքը եղաւ հարցնել թէ որի՞ն էր այդ գեղեցիկ պատկերը :

— Դա Ոսկեգմբէթի դշխոյինն է , պատասխանեց հաւատարիմ Յովհաննէսը :

»Իմ սէրը գէսի նա սցնպէս մեծ է , շարունակեց թագաւորը , որ եթէ ծառերի բոլոր տերեւները լեզուներ լինէին , դարձեալ չէին կարող բացայայտել նրան : Այս օրից ես պէտք է աշխատեմ նրան ձեռք բերել : Դու կ'օգնես ինձ , եթէ հաւատարիմ ծառայ ես :«

Հաւատարիմ Յովհաննէսը երկար մտածեց թէ ի՞նչ պատշաճաւոր կերպով ձեռք զարնէ այս բանին , որովհետեւ անձամբ դշխոյի աչքին ներկայանալ դժուար էր : Վերջապէս նա գտաւ մի հնար և ասաց թագաւորին . »Ինչ որ շրջապատումէ դշխոյին ,

ոսկուց է, աթոռները, սկուտեղները, անօթները, բաժակները և ամեն տեսակ կարասիքը: Քո դանձարանում կայ հինգ տակառ ոսկի. մինը հարկաւոր է տալ ոսկերչաց, որ նոքա շինեն տեսակ տեսակ ոսկէ ամաններ, բաժակներ, թռչուններ, գազաններ, հազար ու մի ձևով ճիւղաղներ, և այլն: Այս բոլորը շատ հաճոյ կ'դայ դըշխոյին: Մենք ճանապարհ կ'ընկնենք այդ սարանքով և կ'աշխատենք յաջողութեամբ վերջացնել:»

Թագաւորը կանչեց տէրութեան բոլոր ոսկերիչները, որոնք աշխատեցան գիշեր ու ցերեկ մինչև որ ամեն բան սլատրաստ եղաւ: Երբ որ նաւը բեռնաւորեցին, հաւատարիմ Յովհաննէսը հագաւ վաճառականի շոր. նոյնը արաւ թագաւորը, որ ոչ ոք չճանաչէ նրան: Յետոյ սլարդեցին առադատը ու նաւեցին մինչև այն քաղաքը, ուր բնակւումէր Ոսկէդմբէթի դշխոյն:

Հաւատարիմ Յովհաննէսը միայնակ ցամաք ելաւ, թողնելով թագաւորը նաւի մէջ:

— Կարելի է, ասաց նա նրան, դշխոյն կըբերեմ այս տեղ, աշխատիր որ անկարգութիւն չըլինի, ոսկէ ամանները դարսած լինին և նաւը շփեղ վարդարուած:

Այս ասելով լցրաւ իր գօտին անհամար
ոսկէ զարդերով և զնաց ուղիղ թաղաւորի
սլաւաւորը: Քաւիթը մտնելով տեսաւ մի
մատաղահաս աղջիկ, որ ոսկէ դոյլով աղ-
բիւրից ջուր էր հանում: Աղջիկը տուն
դառնալու ժամանակ նկատեց անծանօթը և
հարցրեց թէ ո՞վ էր նա: Պէս վաճառական
եմ, սլատասխանեց նա, և հանելով գօտին
ցոյց տուաւ իր ապրանքը:

— Ի՞նչ գեղեցիկ բաներ են, բացա-
գանչեց աղջիկը, և դնելով դոյլը գետնի
վրայ, սկսաւ բոլոր զարդերը առանձին ա-
ռանձին զննել —: Թող, ասաց նա, դշխոյս
տեսնէ այս բաները. նա շատ սիրումէ ոսկէ
զարդեր և անսպառնառ ձեղանից կըզնէ, և,
բռնելով վաճառականի ձեռքից, առաւ տա-
րաւ սլաւատ, ըստ որում ինքը սլաւատական
աղախին էր:

Սակայն հաւատարիմ Յովհաննէսը սլա-
տասխանեց. Պէս մի հարուստ վաճառակա-
նի ծառայ եմ, ինչ որ տեսնումէք այս տեղ,
համեմատելով տիրոջս նաւի մէջ եղած-
ներին, գրեթէ ոչինչ են. այն տեղ դուք
կ'տեսնէք շատ գեղեցիկ և հիանալի բաներ:
Դշխոյն կամենումէր բերել տալ այս բա-
ները, բայց ծառան ասաց. Պիտիտ շատ է,

Հարկաւոր է ժամանակ և տեղ, ձեր սլա-
ւատը փոքր է:»

Դշխոյի հետաքրքրութիւնը աւելի շար-
ժեցաւ և վերջապէս բացադանչեց. «Դէ,
ուրեմն առաջնորդիր ինձ մինչև այդ նաւը.
ես ինքս կ'գամ տեսնել քո տիրոջ գանձերը:

Հաւատարիմ Յովհաննէսը ուրախ ու-
րախ տարաւ նրա նաւ և թագաւորը տե-
սած պատկերից աւելի հաւանեցաւ. սիրտը
ուրախութիւնից բաղխումէր: Երբ որ
դշխոյն եկաւ ծովափը, թագաւորը առա-
ջարկեց նրան իր ձեռքը, մինչ դեռ հաւա-
տարիմ Յովհաննէսը, որ մնացել էր յե-
տեւ, հրամայեց նաւապետին իսկոյն խա-
րիսխը բարձրացնել և բոլոր առագաստնե-
րը պարզելով փախչել: Թագաւորը իջաւ
նրա հետ նաւի ներքին սենեակը և սկսաւ
ցոյց տալ հետ զհետէ սեղանի բոլոր ըս-
պասքը — ամաններ, բաժակներ, թռչուններ,
վայրենի գազաններ և ճիւղաղներ: Շատ ժա-
մեր անցան, մինչև որ Դշխոյն բոլոր բա-
ները աչքէ անցուց, և սաստիկ զննողած լի-
նելով, չնկատեց նաւի գնալը: Երբ աւար-
տեց, շնորհակալ եղաւ կարծեցեալ վաճա-
ռականից և կամեցաւ վերադառնալ իր սլա-
ւատը, բայց հասնելով տախտակամածի

մօտ, նկատեց որ լայնատարած ծովի վրայ էր, շատ հեռու ցամաք հողից և նաւը ուռած առադառտներով արագապէս առաջ էր գնում։ «Դաւաճանութիւն, բացադանջից յուսահատարար, ինձ տանումեն, վաճառականի ձեռք ընկնէ՛լ, հազարապատիկ լաւ է մեռնել։»

Սակայն թագաւորը առնելով ձեռքը, ասաց «Ես վաճառական չեմ, սյլ թագաւոր, ձեզ նման լաւ ընտանիքից։ Եթէ ես ձեզ յափշտակեցի խորամանկութեամբ, վերագրեցէ՛ք այդ միայն սիրոյս սաստկութեան։ Իմ սէրս այնպէս զօրեղ է որ, երբ առաջի անգամ տեսայ ձեր պատկերը, յուշաթափ գետին ընկայ։»

Այս խօսքերը մխիթարեցին ու կակղեցրին դշտոյի սիրտը, ուստի և համաձայնեցաւ ամուսնանալ նրա հետ։

Սինչ նոքա նաւումէին լայնածաւալ ծովի վրայ, հաւատարիմ Յովհաննէսը, նըստած նաւի յառաջակողմը, տեսաւ օդի մէջ երեք ագռաւ, որոնք ուղիղ եկան նստան նրա առաջ։ Նա ականջ դրաւ նոցա խօսակցութեան, սլատճառ որ հասկանումէր նոցա լիզումն։

» Հը, ասուամէր առաջինը, նա տանումէ Ոսկէգմբեթի դշխոյն : «

— Այո, պատասխանեց երկրորդը, սակայն նա դեռ ևս բռնուած չէ :

» Ի՞նչպէս, ասաց երրորդը, նա նստած է նրա մօտ : «

— Այդ ոչինչ է, ասաց առաջինը, երբ նոքա ցամաք ելնեն, թագաւորին կ'բերեն հեծնելու մի խարտեաշ ձի . բայց երբ նա կ'նստի վրան, կ'սլանայ նրա հետ երկինք և այնուհետեւ գնա՛ ու դտի՛ր նրա :

» Բայց, ասաց երրորդը, մի՞թէ ոչ մի հնար չկայ : «

— Սիայն մի հնար կայ, ասաց առաջինը, հարկաւոր է որ մի ուրիշ մարդ յարձակուի ձիու վրայ և սպանէ ստորձանակով : Այս կերպով կարելի է ազատել թագաւորը : Բայց ո՞վ կարող է իմանալ այս . մանաւանդ ով որ իմանայ ու ասէ, իսկոյն ոտից մինչև ծունկը քար կ'դառնայ :

Երկրորդ ազաւը ասաց իր կարգին .
» Ես մի ուրիշ բան ել գիտեմ . դիցու՛ք թէ ձին սպանած լինի, դարձեալ երիտասարդ թագաւորը չէ կարող ձեռք ձգել իր հարսնացուն : Երբ նոքա միասին կ'մտնեն սլաւատ, նոցա դիմաց կ'բերեն սկուտեղի վրայ

մի փառաւոր հարսանիքի շապիկ, առ երեսըս ոսկով ու արծաթով հիւսած, որ իսկապէս ուրիշ բան չէ, բայց եթէ ձիւթ ու ծծումբ, և թագաւորը հագած չի հագած կայրուի մինչև ուղեղը:

— Սիթէ ոչ մի հնար չկայ, ասաց երրորդը:

» Կայ մի հնար, պատասխանեց երկրորդը: Հարկաւոր է որ մի մարդ ձեռնոց հագած առնէ շապիկը ու կրակը ձգէ: Երբ շապիկը այրվի, թագաւորն էլ կաղատուի: Բայց ի՞նչ օգուտ դրանից: Ով որ կ'իմանայ և կ'ասէ, ծունկից մինչև սիրտը քար կը դառնայ: «

Երրորդ ագռաւը յաւելացրեց. » Ես մի բան էլ գիտեմ. դիցուք թէ շապիկը այրուի, երիտասարդ թագաւորը դարձեալ յաջողութիւն չի ունենալ: Հարսանիքի պարահանդէսին մատաղահաս թագուհին անտարակոյս սլար կ'գայ, յանկարծ նա յուշաթափ և մեռածի պէս ցած կ'ընկնի. և իսկոյն նոյն բոսէին կ'մեռնի, եթէ մինը չըարձրացնէ և չծծէ աջ ուսից երեք կաթ արիւն, որ կ'ցայտէ անմիջապէս: Բայց ով այս բանը իմանայ և ասէ, գլխից մինչև ոտը քար կ'դառնայ: «

Այս խօսակցութիւնից յետոյ, ագռաւները թռան գնացին: Հաւատարիմ Յովհաննէսը, որ բոլորը լսել էր, այս բանից յետոյ շատ տխուր և լուռ մնաց: Լռել, անբաղդութիւն էր թագաւորին. խօսել, այն ժամանակ իրեն անբաղդութիւն: Վերջապէս նա ասաց ինքն իրեն. «Ես կ'աղատեմ իմ տէրս, թող կեանքիս գինովը լինի: Երբ նոքա ցամաք հասան, ինչպէս որ ագռաւները գուշակել էին, այնպէս էլ պատահեցաւ. իսկոյն գեղեցիկ խարտեաշ ձի բերին թագաւորին. «Լաւ, ասաց նա, ես կ'հեծնեմ մինչև պալատը.՝» և նա պատրաստուել էր նստել ձիու վրայ, մինէլ տեսնես հաւատարիմ Յովհաննէսը, անցնելով նրա դիմացից, յարձակուեցաւ վրան և հանելով հրացանը, նոյն տեղումը սպանեց ձին:

Թագաւորի միւս ծառաները, որոնք ամենեւին չէին սիրում Յովհաննէսին, բացառանչեցին թէ խելագար հարկաւոր է լինել այդպիսի գեղեցիկ կենդանին սպանելու համար, որի վրայ թագաւորը պիտի հեծնէր: Սակայն թագաւորը ասաց նոցա. «Լռուեցէ՛ք, թողէ՛ք նրան, նա իմ հաւատարիմն է. անտարակոյս ունի պատճառ այդպէս ներգործելու:՝»

Նոքա հասան պալատը և առաջի դահլիճում մի սկուտեղի վրայ դրած էր հարսնութեան շապիկը, որ կարծես թէ ոսկով ու արծաթով էր մանած: Թագաւորը կամենումէր հագնել, բայց հաւատարիմ Յովհաննէսը մղեց նրան և, բռնելով շապիկը ձեռնոյներով, ձգեց կրակի մէջ ու այրեց:

Միւս ծառաները սկսեցին կրկին հաչելու: Պայեցէք մի, ասումէին նոքա, այրումէ թագաւորի հարսնութեան շապիկը: «

Բայց երիտասարդ թագաւորը կրկնեց. Պա, անտարակոյս, պատճառ ունի այդ անելու, թող անէ, նա իմ հաւատարիմն է: «

Կատարեցին հարսանիքը: Այն օրը մեծ պարահանդէս եղաւ և հարսնացուն սկսեց կաքաւել: Այն բոլէից հաւատարիմ Յովհաննէսը աչքերը նրա վրայից չէր առնում: Մինէլ տեսնես թագուհին թուլացաւ ու յուշաթափ ընկաւ գետին: Իսկոյն Յովհաննէսը բարձրացրեց նրան ու տարաւ իր սենեակը և այն տեղ պառկեցնելով նրա անկողնի վրայ, ծծեց աջ ուսից երեք կաթիլ արիւն որ ցայտումէր. նոյն վայրկեանին նա շունչ առաւ և սթափեցաւ. բայց երիտասարդ թագաւորը, որ բոլորը տեսաւ և չէին չէր հասկանում Յովհաննէսի արածից,

բարկացաւ ի վերջոյ նրա վրայ և նստացրաւ բանտ:

Միւս օր հաւատարիմ Յովհաննէսը դատապարտեցին մահի և տարան կախաղանի առաջ: Բարձրանալով սանդուղի վրայ, նա ասաց. «Ամենայն մարդ իր մահից առաջ իրաւունք ունի խօսելու. կարողե՞մ ես էլ:»

«Ես քեզ տալիս եմ իրաւունք, ասաց թագաւորը:

— Դէ, լաւ, լսիր. ինձ անիրաւաբար դատապարտեցին, մինչև այսօր ես հաւատարիմ մնացի:

Այնուհետեւ նա պատմեց ինչ որ լսել էր նաւի մէջ ազնւաների խօսակցութենից, ինչու և պարտաւորվել էր նրա կեանքը ազատելու համար բոլոր այդ բաները անել:

«Ո՛հ, իմ հաւատարիմ Յովհաննէս, բացազանչեց թագաւորը. ես շնորհումեմ քեզ կեանք. շուտով իջցրէ՛ք դրա:» Բայց այս վերջի խօսքը ասածին պէս, հաւատարիմ Յովհաննէսը յուշաթափ ընկաւ և քար դարձաւ:

Թագաւորը և թագուհին սաստիկ տրտմեցան այս բանիս վրայ: «Աւա՛ղ, ասումէր թագաւորը, այնքան հաւատարմութիւնը այսպէս վատ վարձատրուեցաւ:» Նա հրա-

մայեց բերել արձանը իր ննջարանը և դր-
նել անկողնի մօտ : Ամեն վրան նայածին ար-
տասուելով կրկնումէր. «Աւաղ, իմ հաւա-
տարիմ Յովհաննէս, ինչո՞ւ չեմ կարող քեզ
կեանք պարգևել :» Մի քանի ժամանակից
յետոյ, թաղուհին ծնաւ երկուորեակ որ-
դիք, որոնք յաջողապէս մեծացան և եղան
ուրախութիւն իրանց ծնողաց : Մի օր երբ
թաղուհին ժամ էր դնացել, երկու որդիքը
խաղումէին սենեակում իրանց հօր հետ :
Նրա աչքերը ընկան արձանի վրայ և չկա-
րենալով արտասունքները բռնել, ասաց .
«Աւաղ, իմ հաւատարիմ Յովհաննէս, ին-
չո՞ւ չեմ կարող քեզ կեանք պարգևել : Իսկ
արձանը լեզու առնելով ասաց . «Դու այդ
կարող ես անել, եթէ յանձն առնես զոհել
այն, որ քեզ ամեն բանից թանգ է :»

— Ինչ որ ունիմ այս աշխարհում, կը-
զոհեմ քեզ համար, բացառանչեց թաղա-
ւորը :

«Հատ բարի, ասաց արձանը, ինձ կեն-
դանութիւն պարգևելու համար հարկաւոր
է, որ դու կտրես քո երկու որդւոց գլուխ-
ները և նոցա արիւնով սրբես ինձ :»

Թագաւորի երեսի գոյնը թռաւ, լսելով
այս սոսկալի պայմանը, բայց մտաբերելով

անձնատուութիւնը այդ հաւատարիմ ծառային, որ զրկուել էր իր կեանքից նրա համար, հանեց սուրը, իր ձեռքով կտրեց որդւոց գլուխները և սրբեց նոցա արիւնով քարարձանը :

Խսկոյն արձանը կենդանացաւ և հաւատարիմ Յովհաննէսը, ժիր և ուրախ, դիմաց ելաւ: Սակայն, ասաց թագաւորին. «Քո մըտերմութիւնը կ'ստանայ իր վարձատրութիւնը:» Եւ առնելով երեսայոց գլուխները, դրեց ուսերի վրայ և իրանց արիւնով քսեց նոցա խոցերը. նոյն բոսլէին կենդանացան և սկսան թռչկոտել, ասեո թէ ոչինչ չէր սլատահած: Թագաւորը անասելի ուրախացաւ: Լսելով թագուհու ոտքի ձայնը, հրամայեց Յովհաննէսին և որդւոցը թաքնուիլ մի մեծ պահարանի մէջ: Երբ թագուհին ներս մտաւ, հարցրեց նրան. «Աղօթք արիր եկեղեցում:»

— Այո՛, պատասխանեց նա, և ես անդադար մտածումէի հաւատարիմ Յովհաննէսի վրայ, որ մեր պատճառով այնպէս անբաղդացաւ:

— 'Նաղելի՛ կ'ին, մենք կարող ենք նրա կեանք տալ միայն մեր երկու որդւոց կեանքի գնով:

Թագուհին կապտկեցաւ և սիրտը ճըմ-
լեցաւ, սակայն պատասխանեց. «Այդ զոհը
մենք պարտական ենք նրա անձնազոհու-
թեան համար:»

Թագաւորը զարմանալով, որ ամուսինն
էլ նոյն օրինակ էր մտածում, բացեց պա-
հարանը և դուրս հանեց մէջից հաւատա-
րիմ Յովհաննէսը և իր երկու որդիքը:
«Փառք Աստուծոյ, յաւելացրեց նա, նա
փրկւած է և մեր որդիքն էլ կենդանի են:»
Եւ պատմեց թագուհուն ինչ որ անցել էր:
Եւ մինչև վերջը նոքա միասին երջանիկ
ապրեցան:

6

ԵՐԵՔ ԲՍՂԴՍԻՈՐ ԺԱՌԱՆՔ.

Սի հայր կանչեց իր երեք որդիքը և
տուաւ նոցա—առաջինին մի աքաղաղ, երկ-
րորդին մի մանգաղ և երրորդին մի կատու:
«Ես ծերացել եմ, ասաց նա, մահս էլ մո-
տացել է. քանի որ կենդանի եմ, ուղում
եմ խնամք տանել ձեր ասպազայի վրայ: Ես

փող չունիմ՝ ձեզ թողնելու և այժմ ինչ որ տալիս եմ՝ ձեզ, անտարակոյս, ձեր աչքին մի արժողութիւն չունի։ Բայց խմայէ՛ք որ նոցա արժողութիւնը ձեր տնօրէնութիւնից է կախուած։ Աշխատեցէ՛ք ամեն մէկդ մի այնպիսի երկիր գտնել, որ տեղ որ ձեր ունեցածը լսած ու տեսած չլինեն։⁶⁶

Հօր մահից յետոյ, անդրանիկ որդին ընկաւ ճանապարհ իր ժողանդութիւնով. բայց ո՛ւր էր երթում, աքաղաղը արդէն ամենեցուն յայտնի էր. նոքա ամեն քաղաքի զանկադատունների վրայ նստած պտոյտ էին դալիս. գիւղերում՝ անդադար լսվումէր նոցա ձայնը և ոչ ոքին զարմանալու բան էր աքաղաղը, այնպէս որ մեր խեղճը յուսահատվել էր յաջողութեան մասին։ Վերջապէս եկաւ մի կղզի, ուր ոչ ոք էր տեսած աքաղաղ։ Տեղացիք մեծ շփոթութեան մէջ էին, ժամանակը բաժանել չիմանալուն պատճառով։ Առաւօտն ու երեկոն զանազանում էին, բայց գիշերը, ո՛վ քուն էր լինում, չգիտէր որ ժամն էր։ »Տեոնումէք, ասաց նա նոցա, այս փայլուն կենդանին, կարմիր թագով և ասպետական կարթաւոր կօշիկներով, գիշերը որոշած ժամին երեք անգամ խօսումէ. վերջինը, երբոր արեգակը

ծաղումէ: Եթէ ցերեկը երգէ, իմացէ՛ք որ եղանակը փոխվելու է: «

Այս խօսակցութիւնը կղզիաբնակներին շատ հաճոյ թուեցաւ. հետեւեալ գիշերը, ոչ ոք քուն չեղաւ և ամենեքեան մեծ հետաքրքրութեամբ լսեցին աքաղաղին, որ հետ զհետէ երկու, չորս ու վեց ժամերուն երգեց: Նոքա հարցրեցին թէ ծախսու է արդեօք այդ գեղեցիկ թռչունը և թէ քանի է արժուամ: «Այնքան ոսկի, որքան որ մի էշ կարող է տանել», պատասխանեց նա: Ամենքը միաբերան բացազանչեցին, որ այդ գումարն աննշան բան է այդ հրաշալի թռչունի համար, և շտապելով վճարեցին պահանջած գումարը:

Երբ անդրանիկը հարստացած վերադարձաւ, փոքր եղբարքը սաստիկ զարմացան: Երկրորդը վճռեց նոյնպէս գնալ, յուսալով որ գուցէ իր մանգաղն էլ մի բանի կ'ծառայէ: Սակայն, որ տեղից չէր անցնում, միշտ տեսնումէր գեղջուկներ իրենի պէս լաւ մանգաղներով: Վերջապէս, բարեբաղդաբար, եկաւ մի կղզի, ուր մանգաղ ասած բանդ ոչ ոք չգիտէր: Երբ ցորենը հասնում էր այդ երկրում, նոքա իսկոյն հրացաններով զարնում ձգումէին խողանը: Բայց այդ

տեսակ հունձը շատ անկանոն էր. գնդակ-
ները կամ հունձին վրայից էին անցնում
կամ փոխանակ խողանի կսկնում հասկերին,
ինչու և շատ ցորենահատներ կորչումէին.
Թող սյդ, գործողութիւնը լինումէր անա-
սելի որոտմունքով: Երբ մեր բարեկամը
սկսաւ նոցա առաջ հանդարտ ու շուտ հըն-
ձել ցորենը, ամենքը բերանները բացին և
աչքերը ցցած նայեցան վրան: Նոքա ուղե-
ցած գնով գնեցին նրանից և տուին այն-
քան ոսկի, որքան որ մի ձի կարող էր տա-
նել: Երրորդ եղբայրը իր կարգին կամեցաւ
նոյնպէս օգուտ սաանալ կատուից: Մինչ
նա ցամաք հողի վրայ էր, ոչ մի յաջողու-
թիւն չունեցաւ եղբարց նման. ամեն տեղ
կար կատու և այնքան շատ, որ նոր ծնած-
ներից խումբ խումբ խեղդումէին ջրի
ձեջ: Վերջապէս նա եկաւ մի կղզի ուր
որ, բարեբաղդաբար, կատու չէին տեսած,
բայց դրա հակառակ մուկերը այնպէս առատ
բաղմանումէին, որ սեղանների ու նստարան-
ների վրայ տանուտիրոջ առաջ սլար էին
գալի: Ամբողջ կղզին տանջւումէր այդ պա-
տիժից, ինքը Թագաւորը չէր կարող իր պա-
լատի մէջ աղատուել նոցա ձեռքից. բան չէր
մնացել, որ նոքա չկրճէին ու չապականէին:

Բերին կատուն և մի ականթարթում այնպէս
յատակեց երկու դահլիճը, որ բնակիչքը
խնդրեցին թագաւորին ձեռք բերել տէ-
րութեան համար այդ թանկագին կենդա-
նին: Թագաւորը ծախս չարած գնեց կա-
տուն, տալով այնքան ոսկի, որքան կարող
էր մի էշ տանել. և երրորդ եղբայրը վե-
րադարձաւ հայրենիքը եղբայրներից աւելի
հարստացած:

7

ԳԵՐԵԶՄԱՆ.

Սի հարուստ կալուածատէր մի օր դը-
րան տռաջ կանդնած նայումէր իր դաշտերի
ու պարտէզների վրայ: Նրա հովիտը ծած-
կած էր հունձով և ծառերը պտուղներով:
Համբարները անցած տարիների ցորենով
այնպէս լցուած էին, որ առաստաղի բոլոր
տախտակները ծռուել էին նրանց տակը:
Նրա գոմքը լիք էին պարարտ եղերով,
գէր գէր կովերով, առողջ ու փայլուն ձիե-
րով: Նա մտաւ իր սենեակը և ուղղեց

Հայեացքը արկղի վրայ, որի մէջ պահումէր
փողը: Սակայն, որովհետեւ ընկղմել էր խոր
մտածմունքի մէջ իր հարստութեան մա-
սին, ականջին հասաւ մի դաղտնի ձայն, որ
ասումէր. «Այդ բոլոր ոսկովդ կացուցիր
արդեօք բաղդաւոր քեզ շրջապատողներին,
մտածեցիր աղքատների թշուառութեան
վրայ, բաժանեցիր քո հացը քաղցածների
հետ. դո՛ւ էիր քո ունեցածովդ և չէիր ու-
ղում աւելի ունենալ:»

Նրա խղճմտանքը պատասխանեց. «Ես
միշտ խստասիրտ և անողորբելի եմ եղել,
երբէք ոչինչ չեմ արած իմ ծնողաց ու բա-
րեկամաց համար. երբէք չեմ մտածել Աս-
տուծոյ վրայ, այլ միայն իմ հարստութիւնս
աւելցնելու: Երբ բոլոր աշխարհը անգամ
իմս լինէր, ես դարձեալ բաւական չէի լինիլ:»

Նյս մտածողութիւնը վախեցրաւ նրա,
և ծունկերը այնպէս սաստիկ դողումէին,
որ նա ստիպվեցաւ նստել: Նոյն բռնութիւն
դուռը բաղխեցին: Բաղխողը նրա դրացի-
ներից մինն էր, մի խեղճ մարդ շատ զա-
ւակաց տէր, որոնց չէր կարող կերակրել:
«Ես լաւ գիտեմ, մտածումէր նա, որ իմ
դրացիս աւելի խստասիրտ է, քան թէ հա-

րուստ, և անտարակոյս կ'մերժէ ինձ, բայց զա-
ւակներս հաց են խնդրում, ես կ'փորձեմ:»

Նա ասաց հարուստին. «Դուք ուրիշին
բան տալ չէք սիրում, ես այդ գիտեմ.
սակայն ես դառնումեմ ձեզ ոչ մեծ յու-
սով, նման այն խեղդուող մարդու, որ յու-
սահատութեամբ բռնումէ յարդից. որդիքս
սովաւանջ մեռնումեն, շնորհէք ինձ չորս
կապիճ ցորեան:»

Կարեկցութեան կայծը առաջի անգամ
կակղեցրեց նրա ժլատ սրտի կոշտութիւնը:
«Ես քեզ ոչ թէ չորս կապիճ, ութը կ'տամ,
միայն այն պայմանով ...

— Ի՞նչ պայմանով, հարցրեց աղքատը:

«Որ դու առաջի երեք գիշերը իմ մա-
հից յետոյ անցնես շիրիմիս մօտ:»

Այս առաջարկութիւնը հաճոյ չթուեցաւ
աղքատին, բայց ի՞նչ անես, այնպիսի թը-
շուառ վիճակի մէջ նա ամեն բանի կ'հա-
մաձայնէր: Նա խոստացաւ և տարաւ ցո-
րենը իր մօտ:

Կարծես թէ կալուածատէրը գուշակեւ
էր ապագան, որովհետեւ երեք օրից յետոյ
նա յանկարծ մեռաւ, և ոչ ոք չմեղքացաւ
նրան: Երբ նրան թաղեցին, աղքատի մոքին

եկաւ խոստումը, որը շատ ուրախ կ'ըլնէր զանց առնել, բայց ասաց ինքն իրեն. «Այդ մարդը մեծահոգի էր դէսլի ինձ. նա կերակրեց իր հացով զաւակներս և բացի դրանից ես խօսք տուի, կ'նշանակէ սլարտական եմ կատարել:» Երեկոյին գնաց հանգստարան և նստաւ գերեզմանի վրայ: Ամենայն ինչ խաղաղ էր, լուսինը լուսաւորում էր գերեզմանները. և երբեմն երբեմն բուէճը թռթռումէր գերեզմանական ձայներ հանելով: Արեւը ելնելուն պէս վերադարձաւ անվտանգ իր տունը. երկրորդ գիշերը անցուց նոյնպէս առանց վտանգի:

Երրորդ գիշերը նա զգաց մի գաղտնի երկիւղ, ասեա թէ մի առանձին բան էր պատահել: Մտնելով հանգստարան, նա նկատեց պարսպի մօտ մի քառասուն տարեկան գունաթափ մարդ սուր ու կրակոտ աչքերով և մի հին վերարկու հագած, որի տակից երևումէին զինուորականի մեծ կօշիկներ: «Ի՞նչ էր այս տեղ փնդռում, գանչեց ռամիկը, միթէ դուք երկիւղ չէ՞ք կրում այս հանգստարանում:»

— Ես ոչինչ չեմ փնդռում, պատասխանեց միւսը. ինչի՞ց պիտի վախենամ, ես մի արձակուրդս առած զինուոր եմ և այս տեղ

եկել եմ գիշերելու համար, վասն զի այլ
քնակարան չունիմ:

» Ի՛հ, լա՛ւ, ասաց ռամիկը, որովհետեւ
դուք տակաւին երկիւղ չէք կրում, եկէ՛ք
իմ հետ այն գերեզմանը հսկելու:»

— Ուրախութեամբ, պատասխանեց զի-
նուորականը, հսկողութիւնը իմ արուեստն
է, Մնանք միասին և չարն ու բարին բա-
ժանենք մեր մէջ:

Երկուքն էլ նստան գերեզմանի վրայ:
Մինչև կէս գիշերը ամենայն ինչ խաղաղ
էր: Վերջը լսուեցաւ օդի մէջ սուր շառա-
չիւն և պահապանների սուսջ ներկայացաւ
ինքը սատանան: »Հեռացէ՛ք այս տեղից,
անիծածներ, ասաց նա նոցա. այս մեռելը
ինձ է պատկանում, ես կ'ստնեմ, նրա և եթէ
դուք այս րոպէիս չէք հեռանալ աչքիցս,
ձեր վիզը կ'թոցնեմ:»

— Պարոն կարմրափետուր, պատասխա-
նեց զինուորը. դուք իմ զօրապետս չէք և
իրաւունք չունիք ինձ հրամաններ տալու,
ես ամենևին չեմ վախենում ձեզանից: Գը-
նացէ՛ք ձեր ճանապարհով, մենք այս տեղ
կըմնանք:

Սատանան կարծելով որ փողով կ'կարո-
ղանայ յաղթել նոցա, քաղցրութեամբ ասաց

չէն հեռանալ արդեօք, եթէ նա տայ նոցա մի սարկ լի ոսկի, յՇատ բարի, ասաց զինուորը, շատ լաւ մտածեցիր, բայց մի սարկ ոսկին բաւական չէ՛ մեզ, մենք չենք թողնել այս տեղը, մինչև կօշիկներիցս մինը չըլցնենք ոսկով:

— Ինչ որ հարկաւոր է, իմ վրաս այժմ չկայ, ասաց սատանան, բայց կ'երթամ բերելու: Ոչ հեռու այս տեղից բնակուում է իմ ընկեր վաշխառուն, որ ուրախութեամբ կ'հատուցանէ այս դումարը:՝

Երբ սատանան գնաց, զինուորականը հանեց ձախ կօշիկը, ասելով. ՝ Մենք նրա հետ հին պատերազմական խաղ կ'խաղանք: Սանահայր, տուէ՛ք ինձ ձեր դանակը:՝ Նա կտրեց կօշիկի ներբանը և սրունքը ուղիղ կանգնեցրեց բարձր կանանչների մէջ: ՝ Փնփռք Աստուծոյ, ամեն բան յաջողակ է, սև սատանան այժմ կարող է վերադառնալ:՝

Նորա շատ չսպասեցին, սատանան եկաւ փոքր սարկ ոսկի ձեռքը բռնած: ՝ Լցրէ՛ք, ասաց զինուորը, փոքր ինչ բարձրացնելով կօշիկը, բայց այդ բաւական չի լինիր:՝

Չարահնարը թափեց սարկը, բայց ոսկին ընկաւ հողի վրայ և կօշիկը մնաց դատարկ: ՝ Տխմար, գանչեց զինուորը, ասացի

քեզ որ այդ բաւական չէ: Գնա՛ ել շատ
բեր:՝ Սատանան դնաց դլուխը թօթափե-
լով և մի ժամից վերադարձաւ աւելի մեծ
սլարկով: Պէ՛հա՛ այդ բանի նման է, ասաց
զինուորը, բայց չկարծեմ որ լցնէ կօշիկը:՝

Ոսկին ընկաւ ձայներ հանելով, բայց կօ-
շիկը մնաց դատարկ: Սատանան ինքը հա-
ւաստի եղաւ, նայելով իր կրակոտ աչքերով:
Պի՛նչ սարսափելի և լայնատարած բարձեր *)
սէտք է ունենաս, բացագանչեց սատանան,
երեսը ծռելով: ՊՄի՛ թէ ուղումէիր, որ իմ
ոտերս էլ քո այծի ոտերին նմանէին,՝
սլատասխանեց զինուորը: Շատ ժամանակ
է արդեօք, որ այդպէս ժլատ ես եղել: Դէ,
բեր ուրիշ սլարկեր, ասա թէ ոչ մնաս բա-
րե:՝ Նշովածը դարձեալ հեռացաւ: Այս
անգամին նա աւելի ուշացաւ և վերադառ-
նալիս նա ծռվումէր սլարկի ծանր բեռնի
տակ որ կրումէր իր ուսերի վրայ: Որքան
չաշխատեց լցնել կօշիկը, բայց նա տակաւին
մնաց դատարկ, որպէս և առաջները: Սա-
տանան շատ բարկացաւ և սլատրաստուել
էր յափշտակել կօշիկը զինուորի ձեռքից,
մին էլ տեսնես արեգակի առաջի ճառագայթ-

*) Պալլեր:

ները լուսացրին երկինքը : Նոյն բոպէին սատանան աներևոյթ եղաւ մեծ աղաղակ բարձրացնելով : Խեղճի հոգին փրկուած էր :

Ռամիկը ուղեց փողը , բաժանել , բայց զինուորը ասաց . « Իմ բաժինը տուր աղքատաց , ես կ'գամ քո մօտ և մնացածովը միասին հանգիստ կ'ապրինք ինչպէս որ Աստուած կ'կամենայ : »

8

ՓՈՔՐԻԿ ՀՈՎԻԻ .

Մի փոքրիկ հովիւ երևելի հանդիսացաւ իր իմաստուն պատասխաններով այն ամեն հարցերին , որ նրա առաջարկումէին : Նրա համբաւը հասաւ մինչև թաղաւորի ականջը , որ , չհաւատալով ամեն կցկտուր պատմութիւնների , հրամայեց բերել իր մօտ տղան և ասաց նրան .

— Եթէ դու լաւ պատասխանես իմ երեք հարցին , որ կ'առաջարկեմ , կ'որդիացնեմ քեզ և ինձ հետ պալատումս կ'ապրիս :

«Ի՞նչ հարցեր են, թագաւոր, հարցրեց տղան:

— Ահա քեզ առաջինը. քանի՞ կաթիլ ջուր կայ ծովի մէջ:

Հովուիկը այսպէս սրտասխանեց. «Հը՛րամայի՛ր, թագաւոր, պատել աշխարհիս մեծ և փոքրիկ գետերը, այնպէս, որ մի կաթ ջուր ծովը չլծափի, մինչև որ ես սլը՛ծնեմ իմ հաշիւը, այն ժամանակ ես քեզ կ'ասեմ քանի կաթիլ ջուր կայ ծովի մէջ:»

— Ահա քեզ երկրորդը. քանի՞ աստղ կայ երկնքում: — Հովիւը սրտասխանեց. «Թագաւոր, հրաման տուր բերել մի թերթ սպիտակ թուղթ, մի գրիչ և թանաք:» Ասածը արին: Տղան առաւ գրիչը և սկսաւ այնպէս փոքրիկ պուտեր գրել մէկ մէկու մօտ, որ հաղիւ հաղ տեսնուումէին, իսկ համարելը խելքի ու մտածելու բան չէր, մարդուս աչքը մութ կըկոխէր: Երբ ամբողջ թերթը աճուեց, դարձաւ թագաւորին և ասաց. «Ահա՛ երկնքումն էլ կան այսքան աստղ, որքան որ այս թերթի վրայ պուտեր կան. համարեցէք ինքներդ, ջերդ Մեծութիւն:»

Թագաւորը հաւատաց նրա խօսքին, ըստ որում ստիպւեցաւ հրաժարուել հաշուելուց:

— Երրորդ հարցիս նստատակն է իմա-
նալ, յաւիտենականութիւնը քանի՞ վայր-
կենից բաղկանում է:

» **Չերդ Մեծութիւն**, այն տեղ Պոմե-
րանի միւս կողմը կայ մի սար, այդ սարը
ունի մի մղոն բարձրութիւն, մի լայնու-
նութիւն և մի խորութիւն: Հարիւր տա-
րին դալիս է այն տեղ մի թռչուն, ճան-
կումէ կտուցով սարը և տանումէ իր հետ
ադամանդեայ փշուրներ. երբ որ այս թռ-
չունը այդ կերպով ամբողջ սարը կ'ոչնչա-
ցնէ, այն ժամանակ կ'անցանէ յաւիտենա-
կանութեան առաջին վայրկեանը: «

Թադաւորը ասաց. — Իմ բոլոր հարցերին
իմաստունի պէս պատասխանեցիր: Այս
օրից եկ ինձ հետ բնակվի՛ր պալատումս և
եղի՛ր ինձ որդի:

ՂԵՐԶ



Յ Ա Ն Կ.

1	Ռամիկը Երկնքում	5
2	Սախտակ Չիւն և Կարմիր վարդ	7
3	Պրեմ Քաղաքի երաժիշտքը	19
4	Արջի մորթի հագած մարդ	26
5	Հաւատարիմ Յովհաննէսը	36
6	Երեք Բաղդաւոր Ժառանգ	52
7	Գերեզման	56
8	Փոքրիկ Հովիւ	63





504

in B

0 7

L333e

2013

